

Հ Ա Յ Ո Ց Ե Կ Ե Ղ Ե Ց Ի



Քրիստոնեական բոլոր եկեղեցի-
ների մեջ Հայոց եկեղեցին՝ որ
կոչում է իրեն «Հայաստան-
յայց Առաքելական Կաթողի-
կէ եկեղեցի», աչքի է ընկ-
նում իր ժողովրդական բնութիւնով և խորա-
գույն հնութեամբ: Նա հիմնվել է Քրիստոսից
անմիջապէս հետո, Թադեոս և Բարթողոմեոս
առաքյալների քարոզութեան շնորհիւ, որոն-
ցից առաջինը Հայաստան է եկել 33 թվին,
իսկ երկրորդը՝ 44-ին. նրանք քարոզել են
քրիստոնեություն, հիմնել եկեղեցի և Հայաս-
տանումն էլ նահատակվել: Են: Բարթողոմեոսի
գերեզմանը գտնվում է Աղբակում, այժմյան
Պաշալէք քաղաքի մոտ, որի վրա կառուցված
է Ս. Բարթողոմեոսի նշանավոր մայրավան-
քը: Իսկ Թադեոսի գերեզմանը գտնվում է
Արտազում, այժմյան Մակու քաղաքի մոտ,
որ նա նահատակվել է և նորա գերեզմանի
վերա շինվել է Ս. Թադեոսի մայրավանքը:
Երկու առաքյալների գերեզմաններն էլ ողջ
Հայության համար նուիրական մեծ ուխտա-
տեղիներ են: Թադեոս և Բարթողոմեոս ա-
ռաքյալները կոչվում են Հայաստանի «Առա-
ջին Լուսավորիչներ»: Հայ եկեղեցին կարող է
պարծենալ նոցանով և նոցա նուիրական գե-
րեզմանները ցույց տալ իր իր առաքեա-
կան սկզբնավորութեան անհակառակելի
փաստեր: Թե՛ հայ և թե՛ օտար պատմիչները,
ինչպէս Սեն-Մարտենը և այլք, համարում են
հայ ժողովրդին աշխարհում քրիստոնեու-
թյունը ընդունող և քրիստոնեությունը պետա-
կան կրօն հայտարարող առաջին ազգը:

Հայաստանում առաջին դարի կիսում րս-
կիզբն առած քրիստոնեությունը հետզհետե
զարգացավ և Դ դարում տապալեց Հայոց
հին կրօնը՝ հեթանոսությունը և ինքը բռնեց
նորա տեղը: Թե հիրավի քրիստոնեությունը
Հայաստանում անընդհատ աճել է մինչև Դ
դարը և բազմաթիվ քրիստոնեական հա-
մայնքներ են եղել, ապացույց կարող են

ծառայել այդ շրջանում գոյություն ունեցող
երեք եպիսկոպոսական Աթոռները, որոնց
աթոռակալների անունները հիշատակում է
ընդհանուր եկեղեցու պատմությունը:

Քրիստոնեության երկրորդ շրջանը Հայաս-
տանում սկսվում է 301 թվին Անակ Պաշա-
վունու որդու՝ Գրիգորի քարոզութեան շնոր-
հիւ, որ և եղավ Հայաստանի «Երկրորդ Լու-
սավորիչը»:

301 թվին Հայաստանի թագակիր Խոսրովի
որդու՝ Տրդատի կրոնական համոզմունքների
մեջ հեղաշրջում է տեղի ունենում և ուխ-
տոնեության ոխերիմ թշնամին ու հալածիչը
դառնում է նորա զորավոր պաշտպանը:
Տրդատը, իր ամբողջ ընտանիքով և 150.000
ժողովրդով, միտրվում է Գրիգոր Լուսավոր-
չի ձեռքով նվիրատ գետում և քրիստոնեու-
թյունը ճանաչում որպէս պետական կրօն:

Ս. Գրիգոր Լուսավորիչը Տրդատի աջակ-
ցութեամբ 301 թվին, Վաղարշապատ մութա-
քաղաքում հիմնում է հայկական տաճար,
այսօրվա Ս. Էջմիածնի, ու ան օրմահեց
դարձավ Հայոց Հայրապետների Աթոռահե-
տը և կոչվեցավ «Մայր Աթոռ Ս. Էջմիածին»:

Ս. Գրիգոր Լուսավորիչը, իր առաքեական
գործունեության համար, կոչվեցավ Երկրորդ
Լուսավորիչ և Տրդատ թառավորի հետ սրբոց
շարքը դասվեցավ: Նա մեծապէս նպաստեց
քրիստոնեության տարածմանը հարևան Իռ-
կրներում՝ Վրաստանում և Աղուանից
երկրում:

Հայոց եկեղեցու այս երկրորդ շրջանը՝
Լուսավորչյան շրջանը, 301-ից մինչև Ծ դա-
րի երկրորդ կեսը, պետք է նկատել որպէս
կազմակերպական շրջան: Հայոց եկեղեցին
իր վերջնական կազմակերպութիւնը՝ իր
ոգին ու բնութիւնը, որով հարատևում է մինչև
այսօր, ստացավ միայն Ծ դարի երկրորդ
կիսում, երբ նա անցաւ մեծ Հռոմեական և Հո-
ռոմեական եկեղեցիներից, մերժելով Քաղ-
բեդոնի ժողովը, որպէս առաջին երեք տիե-

գերական ժողովներին հակասող:

Ե դարում միայն Հայոց Եկեղեցին, որ իր առաքելական ծագմամբ ինքնագույն (աւտոկեֆալ) էր, դարձավ կատարելապես ազգային, երբ Ներսես Մեծի որդին՝ Սահակ կաթողիկոսը և Մեսրոպ Մաշտոցը հայ տառերը հնարեցին, Ս. Գրիգոր Թարգմանեցին և հետգհետի ստեղծուեցավ Ե դարի հայ կլասիկ գրականութունը, որ հայ եւ օտար գրողները կոչում են «Սակեղարյան Գրականութուն»: Այսպես ուրեմն քրիստոնեութունը տվավ հայերին ազգային գիր, ազգային գրականութուն և պատմութուն, մշակեց հայ լեզուն և սերտ հարաբերութուն ստեղծեց Հունա-Հռոմեական աշխարհի և քաղաքակրթության հետ: Աթենքն ու Բյուզանդիոնը դարձան հայ մատաղ սերնդի կրթության վայրերը, այնտեղի փիլիսոփայական և գրական դպրոցներում ուսումն առին մեր երկրամասերը և մտավոր գանձերի մեծ պաշարով վերադարձան Հայրենիք ու սկիզբ դրին մտավոր գործը շարժման:

Հայոց Եկեղեցին՝ շնորհիվ քրիստոնեության և ազգային գրականության թեքեց հայերին և Հայաստանը դեպի արևմուտք. և հայերը՝ սփական մի ազգ, արևելյան մի ժողովուրդ, Արևելքի և Արևմուտքի, ասիականութան և եվրոպականության մեջ ծագած ահագին կռվում, շնորհիվ Հայ Եկեղեցու և Հայ Հոգևորականության, հարեցին արևմտյան քաղաքակրթության և նպաստեցին այդ քաղաքակրթության տարածմանը Արևելքի մեջ:

Շնորհիվ այդ հանգամանքի, երբ 435 թվին Հայաստանը կորցրեց իր քաղաքական անկախութունը և Հայոց Արշակունի թագավորութունը վերջ գտավ, Հայոց Եկեղեցին և Հայ ժողովուրդը կարողացան ամբողջ Առաջավոր Ասիայում պաշտպանել քրիստոնեութունը այն գործը հայածանքի դեմ, որ սկսել էին Պարսից Սասանյան թագավորները ձգտելով ջնջել քրիստոնեութունը և վերահաստատել Մազդեական կրոնը: Քրիստոնեության շնորհիվ հատկապես Հայոց համար՝ կնշանակել ջնջել ազգային լեզուն, գրականութունը. հայկական կուլտուրան. ուստի հայերը 451 թվին, Հայ հոգևորականության ղեկավարութվամբ, պատերազմեցին Պարսից դեմ Ավարայրի դաշտում, որի հետևանքով պարսիկները ետ կանգնեցին քրիստոնեութունը Հայաստանից և Առաջավոր Ասիայից արմատախիլ անելու գաղափարից:

Հայոց Եկեղեցին՝ Ե դարի սկիզբը լինելով ազգային ու անկախ և Ե դարի երկրորդ կեսին վերջնականապես կազմակերպվելով՝ որ-

պես ժողովրդական սահմանադրական եկեղեցի, թևակոխում է իր երրորդ շրջանը, որը սկսվում է Ե դարի երկրորդ կեսից և տևում մինչև մեր օրերը: Հայ Եկեղեցին, Հայ ժողովրդի թե քաղաքական անկախութունից զրկված ժամանակ (երբ կրում էր նա Հույների, Պարսիկների, Արաբների, Սելջուկների, Մոնղոլների և Թուրքների լուծը), և թե ան ժամանակ, երբ Հայկական նոր թագավորութուններ հիմնուեցին (Թ դարում Բագրատունյաց թագավորութունը, որը տևեց 100 տարի և ԺԱ դարում Ռուբինյանց թագավորութունը, որը տևեց 1080-1393 թիվը), հանդիսացավ միակ Հաստատութունը, որ հոգ տարավ Հայ ժողովրդի հոգևոր-քարոշական և մտավոր-կրթական գործի վերա, պաշտպան և պահպան եղավ ազգային լեզվի, գրականության և առհասարակ հայ կուլտուրայի զարգացման, գեղարվեստի ու գիտության մշակման, որով և կռեց ու կռիվեց ազգային գոյության խաղիսխը. և այդ այնպիսի ժամանակ, երբ համատարած խավար էր տիրում ամենուրեք:

Վանքերի, մենաստանների, անապատների մեջ հայ վարդապետները պարապում էին գրականութվամբ, հորինում պատմական, աշխարհագրական, իրավագիտական, աստուածաբանական, երաժշտական, փիլիսոփայական և գիտական գործեր: Թարգմանում էին հույն, ասորի և արաբ գրականության երկերը: Հիմնում էին դպրոցներ, հիվանդանոցներ, անկեղանոցներ, տպարաններ, թանգարաններ. մի խոսքով թույլ չէին տալիս, որ քաղաքակրթության, ուսման, գիտության և գրականության լույսը մարի Հայաստանում և հարևան երկրներում: Մոտ 900 հայ մատենագիրներից՝ պատմաբան, աշխարհագիր, իրավաբան, բժիշկ, աստուածաբան, փիլիսոփա, աստղագետ — Ե դարից մինչև ԺԹ դարը 5-6 հոգի միայն եղել են աշխարհական, մնացյալները վարդապետներ են:

Հայոց Եկեղեցին իր 1600-ամյա գոյության ընթացքում, բացի հոգևոր-քարոշական, մտավոր-կրթական և կուլտուրական գործունեութունից, ունեցել է նաև քաղաքական գործունեութուն: Նա՝ արաբ, սելջուկ, մոնղոլ, թուրք և պարսիկ աշխարհակալների առաջ հանդիսացել է միջնորդ Հայ ժողովրդի համար ու կոտորածների և ավերումների առաջն առնելով մեղմել է նորա բախտի ծանր հարվածները: Այս հողի վրա հայ հոգևորականները հաճախ մեծ նեղութուններ են կրել և մինչև իսկ նահատակվել ժողովրդի իրավունքները պաշտպանելու հա-

Մար: Քաղաքական գործունեության հանգամանքը ստիպեց Հայոց Կաթողիկոսներին, քաղաքական պայմանների փոփոխության հետևանքով, Աթոռը շարունակ տեղափոխել քաղաքական նոր Կեդրոններ— 478-ին Դուին մայրաքաղաքը. 891-ին Անի մայրաքաղաքը, 1105-ին Կիլիկիա և վերջապես Կիլիկիո Հայ թագավորության վերջանալուց հետո, 1441 թվին վերահաստատել Ս. Էջմիածնում, ուր կա ցայսօր:

Հայ Հոգևորականությունը եղավ նաև տպագրության գյուտը հայերի և Արևելքի մեջ մտցնողը, գյուտից հազիվ 50-60 տարի անց:

Հիշենք նաև, որ իրավունքի գաղափարի և հատկապես հումեական Հոստինիանոսի օրենսդրության տարրերն տարածողը եղել է ԺԲ դարի հայ վարդապետ Մխիթար Գոշը՝ իր հայտնի Դատաստանագրքով:

Մեր ասածների ամփոփումից պարզվում է, որ Հայոց Եկեղեցին Ե դարից մինչև ԺԲ դարը հանդիսացել է միակ հաստատությունը, որ հոգս է տարել Հայ ժողովրդի, ոչ միայն հոգևոր-բարոյական, այլ և մտավոր-կրթական, կուլտուրական և Ազգի գոյության պահպանության, նա հիմք դրեց և զարգացրեց Հայ գրականությունը, գեղարվեստը, գիտությունը և լեզուն՝ տալով ոչ միայն Հայ Ազգին, այլ և մարդկությանը մի շարք պատմաբաններ, գեղարվեստագետներ, գիտնականներ, փիլիսոփաներ և գրողներ, որոնց գործերը, իբրև պիտանի համաշխարհային պատմության և գիտության համար, թարգմանվել են եվրոպական զանազան լեզուներով և դիտնականների բազմաթիվ ուսումնասիրությունների նյութ դարձել: Մասնավորապես Արաբների, Սելջուկների, Մոնղոլների, խնչակրաց, Պարսիկների և Թուրքերի պատմության լուսաբանության և ուսումնասիրության համար ահագին նյութեր են հայթայթում Հայ Հոգևորականների թողած պատմական աշխատությունները:

Մի քանի խոսք էլ Հայ Եկեղեցու ոգու և նորա ժողովրդական կազմակերպության մասին:

Հայոց Եկեղեցին, մինչև Քաղբեդոնի ժողովը, որ գումարվեցավ 451 թվին, Ընդհանուր Բրիստոնեական Եկեղեցու հետ և ընթացել և մասնակցել է առաջին երեք Տիեզերական ժողովներին: Մերժելով Քաղբեդոնի ժողովը, բաժանվեց Հունա-Հռոմեական Եկեղեցիներից, չճանաչեց Հռոմի պապին Բրիստոնի Փոխանորդ և ընդհանուր Եկեղեցու գլուխ: Ընդհանուր Բրիստոնեական Եկեղեցու գլուխ նա ճանաչում է միայն Քրիս-

տոսին. իսկ Պապին՝ Հռոմեական Եկեղեցու Պետ, Կ-Պոլսի տիեզերական կոչվող Պատրիարքին՝ Պրավոսլավ Եկեղեցու Պետ և Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ Հայոց Եկեղեցու Պետ: Մյուս Եկեղեցիների նման ընդունում է Եկեղեցու յոթը խորհուրդները և ճանաչում է իրեն անդամ ընդհանուր քրիստոնեական Եկեղեցու. մյուս Եկեղեցիներին համարում է քույրեր:

Հռոմեական, Հույն և մյուս Եկեղեցիներին չի համարում հերձուածող, ինչպես համարում են առաջինները միմյանց. ուստի և երկրորդ անգամ չի մկրտում, երբ որևէ կաթոլիկ կամ օրթոդոքս հարում է իրեն: Հայոց Եկեղեցու համար հերձուածող են այն աղանդավորները, որոնք դատապարտվել են տիեզերական առաջին երեք ժողովներում:

Հայոց Եկեղեցին ունի վերին աստիճանի ներդրամիտ ոգի. նորա տարեգրությունների մեջ չի կարելի գտնել կրոնական հալածանք, ժողովուրդը քաղաքացիներ է ձգտում, աններդամություն և անհամբերատարություն: Նա թույլատրում է Երուսաղեմում իր սեղանների վերա Ս. Պատարագ մատուցանել Ղպտիներին, Հաբեշներին և Ասորիներին իրենց ազգային լեզվով: Նա թույլ է տալիս իր գերեզմանատներում օտար դավանության պատկանողներին թաղել և նորա վերա կրոնական ծեսեր կատարել և այլն:

Նա իր ներքին կազմակերպությամբ ժողովրդական է, որովհետև կառավարվում է ոչ լոկ հոգևորականներով, այլ ժողովրդի մասնակցությամբ: Բոլոր պաշտոնյաները՝ Կաթողիկոսից մինչև դպիրը ընտրվում են ժողովրդի կողմից: Ժողովրդական ոգու և տարրի տիրապետությունը այնքան հին է և օրինական, որ ցարական Պետությունը, երբ 1836 թվին Հայոց Եկեղեցու կառավարության համար «Պոլոժենիա» կոչված օրենքը հրատարակեց, ստիպված եղավ պահպանել Հայոց Եկեղեցու ընտրական և ժողովրդական սկզբունքը: Եկեղեցական-Վարչական բոլոր մարմիններն ու հաստատությունները՝ Ազգային Եկեղեցական ժողով, Գերագույն Հոգևոր Խորհուրդ, Թեմական Խորհուրդ, Եկեղեցական Խորհուրդ և այլն կազմված են աշխարհիկ և հոգևոր տարրերից, հաճախ աշխարհականների գերակշռությամբ: Այս է համառոտ ուրվագիծը Հայ Եկեղեցու ծագման, նորա անցյալ պատմության և գործունեության:

Հայ Եկեղեցին և Հայ ժողովուրդն անցյալում քրիստոնեության շնորհիվ ստեղծել են ազգային մշակույթ, որը դարերի ընթաց-

քում հանդիսացել է հայ ազգի գոյության պահպանության հիմքը:

Հայ Եկեղեցին և Հայ ժողովուրդը դարեր շարունակ հայ ազգի անկախության և ազատության համար կռիվ են մղել և արյան գնով պաշտպանել Հայ Հայրենիքը:

Հայ ժողովուրդը Հայ Եկեղեցու ղեկավարությամբ Առաջավոր Ասիայում պաշտպանել է քրիստոնեությունը Պարսից զորեղ հալածանքից և չեզոքացրել քրիստոնեության ջնջման վտանգը:

Հայ ժողովուրդը Հայ Եկեղեցու ղեկավարությամբ թեքվեց դեպի Արևմուտք և Արևելքի ու Արևմուտքի կամ ասիականության ու եվրոպականության մեջ ծագած կռիվին մասնակցեց՝ հարելով Արևմտյան քաղաքակրթության ու նպաստելով նորա տարածմանն Արևելքում:

Հայ ժողովուրդը Հայ Հոգևորականության գլխավորությամբ ստեղծել է իր մշակույթը և իր կյանիկ գրականությունը, որ, իբրև պիտանի համաշխարհային պատմության և գիտության համար, թարգմանվել է եվրոպական բազմաթիվ լեզուներով և արևելյան ազգերի պատմության լուսաբանության ու ուսումնասիրության համար անհրաժեշտ աղբյուր դարձել:

Հայ ժողովուրդը այսօր էլ համաշխարհային մեծ պատերազմում արյուն թափելով սասնակցեց ազգերի ազատության ու անկախության և մարդկային կոլտուրայի փրկության համար մղված կռիվն բոլոր ճակատներում և նպաստեց պատերազմի հաղթական վախճանին:

Եվ այս բոլորից հետո մի՞թե մեծ Պետությունները պիտի մոռանան Հայ ժողովրդի մատուցած ծառայությունները համամարդկային կոլտուրային և անցյալ ու այս պատերազմում նորա բերած արժեքավոր օժանդակությունը. պիտի մոռանա՞ն նորա կրած ահավոր զոհողությունները. մի՞թե նոքա պիտի մոռանան իրենց տուած պաշտոնական և հանդիսավոր խոստումները և պիտի վաճառե՞ն Հայի դատն ու արյունը Թուր-

քիայի անվստահելի բարեկամությունը շահելու համար:

Անիրավ կլինի չճանաչել Հայի արդար պահանջը, չվերադարձնել նրան Թուրքիայի կողմից բռնությանմբ խլուած Հայկական պատմական Հողամասերը՝ կցելով այն Խորհրդային Հայաստանին, ինչպես իր ժամանակին հայտարարել է Վիլսոնն ասելով, որ անկախ Հայաստան կարող է դոյություն ունենալ միայն Ռուս մեծ ժողովրդի պաշտպանության ներքո:

Անիրավ կլինի չճանաչել իր երկրից բռնի վտարված Հայ ժողովրդի իրավունքը՝ իր հայրենի երկիրը վերադառնալու, որի համար նա մեկ ու կես միլիոն Հայ մարդու արյուն է թափել և հողից, տնից-տեղից ու գույքից զրկվել:

Հայ ժողովուրդը, անցյալում իր ստեղծած կոլտուրայով և իր ներկայիս ցուցաբերած բնազդականություններով ու տարած վարքագծով, իրավունք ունի իր դատը հանդես բերելու և հօգուտ յուր որոշում ակնկալելու Միացյալ Ազգերի արդարադատությունից:

Այդ իրավունքը տվել է Պորտն նաև Սևրի դաշնագիրը, որ 1920 թվի օգոստոսի 10-ին ստորագրվել է Եվրոպական Պետությունների և Թուրքիայի կողմից, որով Հայաստանի անկախության հարցը միջազգային բնույթ է ստացել և որոշվել է Հայոց վերադարձնել Արևելյան նահանգները. իսկ սահմանների ճշտումը՝ հաղթանակող Պետությունների կողմից հանձնվեց Ամերիկայի մեծանուն Ֆայսագահ Վիլսոնին, որի սահմանագծի մեջ մտան Երևանի, Ղարսի, Արդահանի նահանգները և Վանի, Էրզրումի, Տրապիզոնի ու Բիթլիսի վիլայեթները: Այս սահմանագծում ստորագրել և հաստատել է նաև Թրքական կառավարությունը: Եվ վերջապես այդ իրավունքը տուել է նորան նաև աշխատհի երկու մեծ Պետությունների հրապարակային խոստումը Ատլանտյան խարտիայով, որին ձայնակցել է նաև երրորդ մեծ Պետությունը, պատերազմի գլխավոր հերոսը՝ Խորհրդային Միությունը:

